ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 9—10-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Բ. Սարկիսով, Ֆ. Սարգսյան, Գ. Անդրեևը, Կ. Դալլամյան, Վ. Զալումյան, Լ. Ներսիսյան, Հ. Ոսկանյան, ՀԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Խաչիկյանը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Այս տարի, ասաց նա, ժողովը տեղի է ունենում ՍՄԿԿ XXVI համագումարի ավարտից անմիջապես հետո, համագումար, որը հստակորեն ձևակերպեց սովետական հասարակության կյանքում գիտության տեղն ու առաջադիմությունը։ Հանրապետության գիտական հասարակայնությունը, շարունակեց Վ. Համբարձումյանը, վերջին ամիսներին ծանր կորուստներ կրեց. վախճանվեցին ականավոր գիտնականներ, ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Է. Միրզաբեկյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Բունյաթյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Զալոյանը:

Այնուհետև Վ. Համբարձումյանը հանգեցնելով «ՍՄԿԿ XXVI համագումարը և գիտության զարգացման խնդիրները Հայաստանում» զեկուցումով, նոր հնգամյակի ելագծային տարվա առաջին իսկ ամիսները, ասաց նա, նշանավորեցին սովետական ժողովրդի համար հատուկ կարևորություն ունեցող իրադարձություններով, որոնց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում ՍՄԿԿ XXVI համագումարը։ Իր քննարկած հարցերով ու առաջադրած խնդիրների խորությամբ առաջին իսկ օրից այն իր վրա բևեռեց սովետական բոլոր մարդկանց, ինչպես նաև համաշխարհային հասարակայնության ուշադրությունը։ ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարներում, շարունակեց զեկուցողը, որպես մեր հետագա զարգացման առաջնակարգ գործոն նշվեց գիտության աճող դերը. նրա նշանակությունն արդի պայմաններում, ինչպես հասարակական զարգացման, այնպես էլ նրա գոյության նյութական միջավայրի՝ բնության պահպանման գործում։ Համագումարը պահանջեց, որ ապահովվի ավելի սերտ կապ գիտության և արտադրության միջև, սերտանա դրանց միասնությունը։ Ապա խնդրում, այնուհետև ասաց Վ. Համբարձումյանը, կարևոր է նաև ֆունդամենտալ գիտության դերը, որը կոչված է լուծելու արտադրության համար սկզբունքային նշանակություն ունեցող խոշոր խնդիրներ, հեռանկարային նոր ուղիներ բացել այդ բնագավառում։ Վ. Համբարձումյանն ընդգծեց, որ Հայաստանում գիտությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ֆունդամենտալ հետազոտությունների սիստեմատիկայի ըստ ամենայնի բարձրացում, հետազոտությունների արդյունքների առավել արդյունավետ օգտագործում արտադրության մեջ, փորձնական արտադրական տարածությունների կազմակերպում, ինչպես նաև սեփական գիտական դեմքի առկայություն։ Անդրադառնալով գիտության արդի խնդիրներին, Վ. Համբարձումյանը նշեց ակադեմիական և ոչ ակադեմիական ինստիտուտների համագործակցության ուժեղացման, դրանց աշխատանքների կոորդինացման, գիտության տարբեր ճյուղերի արդյունավետ փոխազդեցության կարևորությունը։ Զեկուցողը անդամանորեն կանգ առավ նաև հանրապետությունում գիտական նոր ուղղությունների զարգացման խնդիրների վրա, նշեց, որ անհրաժեշտ է զարկ տալ հասարակագիտական այնպիսի ճյուղերին, ինչպիսիք են հոգեբանությունը և իրավաբանությունը։ Լուրջ ուշադրություն պետք է նվիրել նաև բնական գիտությունների նորագույն այնպիսի ուղղություններին, ինչպիսիք են կենսաֆիզիկան, կիբեռնետիկան։

Ի մի բերելով գիտությունների ակադեմիայի անցած հնգամյակի արդյունքները և առաջիկա խնդիրները, Վ. Համբարձումյանը նշեց հանրապետության գիտության համակողմանի զարգացման նկատմամբ Հայաստանի կոմկուսի կենտկոմի և հանրապետության կառավարության ցուցաբերող հսկայական ոգնությունը։ Նա միաժամանակ հավաստիացրեց, որ Սովետական Հայաստանի գիտության աշխատողների բանքերը կնպաստակամվեն տնտեսական ու սոցիալական այն վիթխարի խնդիրների կենսագործմանը, որոնք մշակել է ՍՄԿԿ XXVI համագումարը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1980 թ. և 10-րդ հնգամյակի տարիների

գիտական ու գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ Դ. Դալոյանը: Նա հանգամանորեն խոսեց ակադեմիայի ինստիտուտների և գիտական հիմնարկների կարևորագույն ձեռքբերումների մասին, ընդգծեց, որ 1976—1980 թվականներին ակադեմիայի հրատարակչությունը հրատարակել է 543 անուն գիրք, լույս է տեսել ավելի քան վեց հազար գիտական հոդված: Միաժամանակ զեկուցողը նշեց, որ աշխատանքներում դեռևս կան շոշափելի թերություններ ու բացթողումներ, որոնք ավելի նկատելի են դառնում ՍՄԿԿ XXVI համագումարի կողմից գիտությանը ներկայացված պահանջների լույսի տակ: Այնուհետև Դ. Դալոյանը վերլուծեց հաշվետու ժամանակաշրջանում ՀՍՍՀ ԳԱ նախագահության և բաժանմունքների կատարած աշխատանքը: ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի ներքո նա հանգամանորեն խոսեց գիտությունների ակադեմիայի դերի ու պատասխանատվության հետագա բարձրացման, ժողովրդատնտեսական պահանջներին համապատասխան գիտահետազոտական հիմնարկների կառուցվածքը, գիտական խորհուրդների գործունեությունը բարելավելու, ինչպես նաև ԳԱ գիտական գործունեության կազմակերպչական ձևերը կատարելագործելու, ընդունված որոշումների կատարման գործում բարձր կարգապահություն ամրապնդելու անհրաժեշտության, գիտական կադրերի պատրաստման, ՀՍՍՀ ԳԱ միջազգային կապերի մասին:

Հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Մաղաքյանը, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա. Ամատունին, Սևանի ջրակենսաբանական կայանի դիրեկտոր, կենսաբանական գիտությունների թեկնածու Ի. Հովհաննիսյանը, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Բուռատասը:

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում «Գիտության նվաճումները և Հայկական ՍՍՀ քարի պաշարների ռացիոնալ օգտագործումը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Սիմոնովը:

Ժողովում ելույթ ունեցան նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Մանվելյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը: Ֆ. Սարգսյանն ընդգծեց բնական պաշարների հանույթի և օգտակարության ասպարեզում խնայողության խստագույն ռեժիմ իրականացնելու անհրաժեշտությունը: Այնուհետև նա խոսեց ՍՄԿԿ XXVI համագումարի պահանջներից բխող ժողովրդական տնտեսության համար կատարվող մշակումների արտադրական ներդրման գործում հանրապետության գիտությունների ակադեմիայի որոշակի դերի մասին:

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողությունը:

Գիտական արդյունավետ գործունեության համար «Մեծարման գրիչ» արժանացավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Սիմոնովը: Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար «Վաստակագրքի» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ջանջուկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Է. Ջրբաշյանը, Ա. Աբրահամյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Ի. Սարգսյանը և երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Կ. Շիրինյանը: 1980 թվականին գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի մեծ խումբ գիտաշխատողների հանձնվեց «Գովեստագիր»:

Ժողովը լսեց կազմակերպական հարցեր. Հայկական ՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ ընտրվեց հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Իոսիֆյանը: Հաստատվեցին ակադեմիայի մի շարք ինստիտուտների դիրեկտորներ:

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 6-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը: Բաժանմունքի 1980 թ. գործունեության հիմնական արդյունքները և 11-րդ հնգամյակի խնդիրները ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի տակ զեկուցումով հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-

քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը: Նա ասաց, որ բաժանմունքի գիտական հիմնարկների գիտահետազոտական աշխատանքները անցած հնգամյակում ուղղված են եղել ՍՄԿԿ XXV և ՀԿԿ XXVI համագումարների, ՍՄԿԿ կենտկոմի և ՀԿԿ կենտկոմի համապատասխան պլենումների որոշումների կատարմանը: Զեկուցողը նշեց, որ բաժանմունքի հիմնարկները 34 պրոբլեմի գծով մշակել են 143 թեմա, պլանին համապատասխան ավարտել 46-ը, հրատարակել 44 աշխատություն: Այնուհետև Գ. Ղարիբջանյանն անդրադարձավ բաժանմունքի հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, գիտական ինֆորմացիայի սեկտորի, բաժանմունքի և բաժանմունքի բյուրոյի, գիտական խորհուրդների գործունեությանը, նշեց ձեռք բերված գլխավոր հաջողությունները, ինչպես նաև խոսեց ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի ներքո բաժանմունքի խնդիրների մասին:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Բ. Առաքելյանը, Ա. Առաքելյանը, Ս. Երեմյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Սարգսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ա. Մնացականյանը և Խ. Բարսեղյանը: Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1980 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին նոր հնգամյակում ինստիտուտների հիմնական խնդիրների մասին: Մտքերի աշխույժ փոխանակությունն ամփոփեց Գ. Ղարիբջանյանը:

Ժողովում «ՍՄԿԿ XXVI համագումարը և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիները Հայկական ՍՍՀ-ում» զեկուցումով հանդես եկավ տնտեսական գիտությունների դոկտոր Վ. Խաչարեկյանը:

Բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր:

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 7-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը: Բաժանմունքի 1980 թ. գործունեության հիմնական արդյունքները և 11-րդ հնգամյակի խնդիրները ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի տակ զեկուցումով հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Բրուտյանը: Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքը կազմակերպչական նպատակասլաց աշխատանք է ծավալել ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքները տեսական-գաղափարական ամուր հիմքերի վրա դնելու, այն կուսակցության որոշումների, մասնավորապես «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների հետագա բարելավման մասին» ՍՄԿԿ կենտկոմի հայտնի որոշման կենսագործմանը ի սպաս դնելու ուղղությամբ: Հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկները 27 պրոբլեմի գծով մշակել են 45 թեմա, պլանին համապատասխան ավարտել են 9-ը, 1980 թ. բաժանմունքի ինստիտուտների մակնիշով լույս է տեսել 46 անուն գիրք: Զեկուցողն այնուհետև անդրադարձավ բաժանմունքի հիմնարկների՝ փիլիսոփայության և իրավունքի, լեզվի, գրականության և արվեստի ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի, կոորդինացման գիտական խորհուրդների գործունեությանը, նշեց ձեռք բերված գլխավոր հաջողությունները, տեղ գտած թերությունները, ինչպես նաև խոսեց ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների որոշումների լույսի տակ բաժանմունքի առջև ծառացած խնդիրների մասին:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Մկրյանը առաջարկեց բաժանմունքի 1980 թ. գործունեությունը գնահատել բավարար: Բաժանմունքի ակադեմիկոսներն ու թղթակից անդամները հավանություն տվեցին արված առաջարկությանը:

Ժողովում զեկուցումներով հանդես եկան փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Թովմասյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջանուկյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Զրբաշյանը: Ս. Թովմասյանի զեկուցման թեման էր «ՍՄԿԿ XXVI համագումարը և մարքս-լենինյան տեսության մի քանի հարցեր»: Գ. Ջանուկյանը զեկուցեց Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների աղբյուրների մասին, իսկ Է. Զրբաշյանը՝ հայ նոր գրականության ուղղությունների ազգային յուրահատկության հարցի շուրջը:

Բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՁԱՔԱՐՅԱՆ